ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, գործավարություն, հեռ. 596-125

№ 27/13 32 «24» 11 2023 թ.

Ռեմ ընդ Ռեփ ՍՊԸ (ՀՎՀՀ 00470205)
ՀՀ, ք. Երևան, Ռոստոմի Փ. /S/ 96/7
Հեռ.՝ +37495333757
էլ. հասցե՝ REMREM48@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և Ռեմ ընդ Ռեփ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 10.07.2023 թվականին կնքված ՀՀ ՆԳՆ Ո ԳՀԱՇՁԲ-2023/ՇԻՆ/Ա-53 ծածկագրով սանհանգույցների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Կատարողին տրվել է նախազգուշացում՝ պայմանագրով ստանձնած աշխատանքները որակով և պատշաճ կերպով կատարելու վերաբերյալ, սակայն կազմակերպությունը միչև օրս աշխատանքները չի իրականացրել և չկատարման վերաբերյալ չի ներկայացրել որևէ պարզաբանում:

Համաձայն Պայմանագրի 2.1-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագրային պարտավորությունները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 7.9-րդ կետը՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը միակողմանի ամբողջությամբ լուծում

է ՀՀ ներքին գործերի նախարարության և Ռեմ ընդ Ռեփ ՍՊԸ-ի միջև 10.07.2023 թվականին կնքված ՀՀ ՆԳՆ Ո ԳՀԱՇՁԲ-2023/ՇԻՆ/Ա-53 ծածկագրով պայմանագիրը: Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Կատարողին առաջարկվում է սույն ծանուցումը հրապարակվելուց հետո 5 /հինգ/ օրացույցային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության N 900005028106 հաշվեհամարին փոխանցել Պայմանագրի 5.2 կետերով նախատեսված տուգանք՝ 49 725.7 /քառասունինը հազար յոթ հարյուր քսանհինգ ամբողջ յոթ/ ՀՀ դրամ, պայմանագրի 5.3 կետերով նախատեսված տույժ՝ 149 177 /հարյուր քառասունինը հազար հարյուր յոթանասունյոթ/ ՀՀ դրամ, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցել պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված պայմանագրի ապահովում՝ 1 400 000 /մեկ միլիոն չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ և որակավորման ապահովում՝ 2 000 000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ, հակառակ դեպքում գումարները կգանձվեն դատական կարգով: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել ՀՀ ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժին /ք. Երևան, Նալբանդյան 130/:

Կատարողի կողմից նշված գանձման ենթակա գումարները չվճարվելու դեպքում ընկերությունը կներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

Գնումների համակարգման բաժին
Կատարող՝ Ա. Սարգսյան
Հեռ.՝ 010-59-61-52